Արձանագրություն N 5

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 փետրվարի 2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած եզրակացության և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի մասին

(Տ.Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

1.1.1 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված <<էլեկտրոնայի աճուրդի իրականացման>> կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ <<ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 44 512 (քառասունչորս հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

1.1.2 Հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- ***1-ին չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում

բացակայում է հավելված 2-ը,

հավելված 3-ում լրացված չէ <<ապրանքային նշան>> դաշտը, արտադրողի անվանման փոխարեն նշված է հավաքող ընկերության անվանումը, իսկ <<ծագման երկիր>> դաշտում պրոցեսորի վերաբերյալ տեղեկատվությունը հստակ չէ (***պրոցեսորը՝ Վիետնամի կամ Մալազիայի արտադրության է***):

- ***2-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում

բացակայում է հավելված 2-ը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի չօգտագործված լինելու վերաբերյալ հավաստումը:

- ***3-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի որոշ տվյալներ հստակ չեն (տպելու որակը ***ոչ պակաս 4800x2400 dpi***, սկանավորման որակը ***ոչ պակաս 1200x2400 dpi***, տպելու և պատճենահանման արագությունը ***ոչ պակաս 32 էջ/րոպեում սև, 20 էջ/րոպեում գունավոր***):

- ***5-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Շատվոր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում

բացակայում է հավելված 2-ը,

մասնակցի կողմից հավելված 3-ով առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը հստակ չէ:

1.1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ Կարգ) 44-րդ, 47-րդ և 48-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- ծանուցել յուրաքանչյուր չափաբաժնի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում դրանք շտկելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվեն բավարար: Հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:
- ***4-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Տեխնոֆորում>> ՍՊԸ-ի հայտը մերժել և ծանուցել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ընթացակարգի շրջանակներում <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի վերաբերյալ Կոմիտեի կողմից ստացվել է տեղեկատվություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ՝ կրկնակի հարցում չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից շտկելու մասին

(Տ.Ղուկասյան)

2.1 ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից շտկվել և համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի փետրվարի 22-ի N 01.1/26-1/2727-19 գրության (էլեկտրոնային աճուրդների համակարգի աշխատանքներն անհայտ ժամանակով դադարեցվել են) ուղարկվել են tender1@minurban.am էլեկտրոնային հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ.Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի և Կարգի 44-րդ կետի դրույթները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել.

չափաբաժին 1 - <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ին,
չափաբաժիններ 2 և 4 - <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ին,
չափաբաժին 3 - <<ՆորմաՊլյուս>> ՍՊԸ-ին,
չափաբաժին 5 - <<Շատվոր>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ.Ղուկասյան)

4.1 Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել արձանագրության 3.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ.Ղուկասյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան